ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/8114/02/24**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 նոյեմբերի 2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Կ. Արզումանյան) (այսուհետ՝ Դատարան),

քննելով ըստ հայցի «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 16.08.2024 թվականի որոշումն և «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 26.08.2024 թվականի թիվ 141 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը 06.11.2024 թվականին մակագրվել է Դատարանին:
(1) Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
(2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունից պետք է պահանջել թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 16.08.2024 թվականի և «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 26.08.2024 թվականի թիվ 141 որոշումների հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները:
Միևնույն ժամանակ Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանողը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից

անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
(3) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:
Հիմք ընդունելով վերոգրյալ կարգավորումները՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է նշանակել դատական նիստ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 199-րդ, 200-րդ, 27.2-րդ գլխի կանոններով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. ՀՀ պաշտպանության նախարարությանց պահանջել թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին 16.08.2024 թվականի և «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրատուի ղեկավարի 26.08.2024 թվականի թիվ 141 որոշումների հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները:
3. Դատական նիստ նշանակել 2024 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մովսես Խորենացու փողոց թիվ 162ա հասցեում):
4. Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի դեկտեմբերի 23-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:
Որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
Կասեցնել գնման գործընթացը՝ որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Դատավոր՝ Կիմա Արզումանյան

Digitally signed by
ARZUMANYAN KIMA 6307860855
Date: 2024-11-11 18:24:45

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am